Ա Ր Ձ Ա Ն Ա Գ Ր ՈՒ Թ Յ ՈՒ Ն N 2

Ք. Երևան, 20 հունիսի 2025 թվական

Հայաստանի Հանրապետության սննդամթերքի անվտանգության տեսչական մարմնի (ՍԱՏՄ) կառավարման խորհրդի (Խորհուրդ) հերթական նիստի

Մասնակցում էին՝

Գ. Պապոյան – ՀՀ էկոնոմիկայի նախարար (Խորհրդի նախագահ)

Ժ. Խառատյան – ՀՀ վարչապետի աշխատակազմի տեսչական մարմինների աշխատանքների համակարգման գրասենյակի ղեկավարի տեղակալ (Խորհրդի անդամ)

Ա. Պողոսյան – ՀՀ ֆինանսների նախարարի տեղակալ (Խորհրդի անդամ)

Տ. Սարգսյան – ՀՀ էկոնոմիկայի նախարարի տեղակալ (Խորհրդի անդամ)

Կ. Չիլինգարյան – <<Սպառողների խորհրդատվության կենտրոն>> հասարակական կազմակերպության նախագահ (Խորհրդի անդամ)

Ա. Պետրոսյան - <<ՓՄՁ համագործակցության ասոցիացիա>> հասարակական կազմակերպության կառավարման խորհրդի անդամ (Խորհրդի անդամ)

Օ. Աբրահամյան – ՀՀ արդարադատության նախարարի տեղակալ (Խորհրդի անդամ)

Հ. Զաքոյան – Ազգային ագրարային համալսարանի ռեկտոր(Խորհրդի անդամ)

Բացակայում էին՝

Լ. Նանուշյան – ՀՀ առողջապահության նախարարի առաջին տեղակալ (Խորհրդի անդամ)

Ա. Առաքելյան – ՀՀ ԳԱԱ-ի Մոլեկուլային կենսաբանության ինստիտուտի տնօրեն, ավագ գիտաշխատող (Խորհրդի անդամ)

Հրավիրված էին՝

Տ. Պետրոսյան - ՍԱՏՄ ղեկավարի տեղակալ, ղեկավարի պարտականությունները կատարող

Մ. Գրիգորյան – ՍԱՏՄ որակի ապահովման վարչության պետ

Ա. Ասատրյան – ՍԱՏՄ անասնաբուժության վարչության պետ

Ա. Գևորգյան – «ՀԱԲԼԾԿ» ՊՈԱԿ-ի տնօրենի ժամանակավոր պաշտոնակատար

Ա. Ստեփանյան - Խորհրդի քարտուղար

Ողջունելով ներկաներին՝ Խորհրդի նախագահ Գ. Պապոյանը առաջարկեց հաստատել օրակարգը, որում ընդգրկված էր 7 հարց:

Օրակարգը հաստատվեց միաձայն, որից հետո Հայաստանի Հանրապետության էկոնոմիկայի նախարար Գ. Պապոյանը ներկայացրեց օրակարգի առաջին հարցը:

Օրակարգի 1-ին հարցը Հայաստանի Հանրապետությունում մարդկանց և կենդանիների բրուցելոզ հիվանդությունների առկա վիճակը.

Ներկայացնելով բրուցելոզ հիվանդության տարածման ներկա վիճակը, նշեց որ առանցքային կարևորություն ունեն որոշ խնդիրներ: Մասնավորապես, ներկայումս արյան նմուշառման գործընթացը դժվարացել է, ինչը պայմանավորված է կենդանիների արոտավայրեր տեղափոխման հետ: Գ. Պապոյանը նաև նշեց, որ բրուցելոզ հիվանդության տարածման հիմնականում երկու պատճառ կա, որոնցից առաջինը կապված է տարածաշրջանային կենտրոնների փակման հետ, որը խոչընդոտում է արյունառման աշխատանքների ժամանակին և սահուն ընթացքի ապահովմանը՝ հանգեցնելով մի շարք խնդիրների. միայն մարզային կենտրոններում և Երևան քաղաքում նմուշները հետազոտելու պարագայում դժվարանում է ապահովել փորձանոթների ժամանակին հետ վերադարձը, տեղափոխման ընթացքում փոպվում է նմուշների որակը և հետևաբար ամբողջ գործընթացը: Խնդիրներ է առաջացնում արյան նմուշների տեղափոխման հետ կապված, քանի որ այդ լաբորատորիաներին համարժեք խնդիրների լուծման այլ առաջարկներ չեն ներկայացվել: Երկրորդ խնդիրը

կարող է կապված լինել վերահսկողության թերությունների հետ, ինչպես նաև սեզոնային առանձնահատկություններով պայմանավորված անհրաժեշտ է միջոցներ ձեռնարկել հիվանդության տարածման կանխարգելման համար աշնանը և ձմռանը խնդիրն էլ ավելի չխորացնելու նպատակով:

Տ. Սարգսյանը նշեց, որ կենդանի կենդանիների համարակալման գործընթացին զուգահեռ իրականացվել է նաև արյան նմուշառման գործընթացը, սակայն որոշ մարզերում փաստացի լաբորատորիաների փակ լինելու հանգամանքով պայմանավորված, ինչպես նաև բավարար չափով փորձանոթներ չունենալու պատճառով արյան նմուշները սահմանված ժամանակում մարզային կենտրոններ կամ քաղաք Երևան չեն տեղափեխվել, ինչի հետևանքով նմուշառված արյունները հեմոլիզացվել են, որի հետևանքով ՍԱՏՄ կողմից հարուցվել են վարչական վարույթներ՝ անասնաբույժների մոտ զննում իրականացնելու համար:

Տ.Սարգսյանը ներկայացրեց, որ նախապես պայմանավորվածություն է եղել, որ շիճուկաբանները արյան նմուշները պետք է տրամադրեին տեսուչներին, որոնք էլ պիտի տեղափոխեին դրանք լաբորատորիաներ, սակայն այս գործընթացը չի իրականացվել, ինչն էլ հանգեցրել է այս արդյունքին: Խնդիրներ են նաև լոգիստիկայով պայմանավորված արյան հեմոլիզացման հետ կախված:

Տ.Պետրոսյանը նշեց, որ այժմ գործում է 11 լաբորատորիա /10 մարզերում և 1-ը Երևան քաղաքում/, որոնք հագեցած են անհրաժեշտ միջոցներով, իսկ մյուսների հետ վերաբացման պայմանագրեր չեն կնքվել,առաջարկեց բացել ևս երկու լաբորատորիա Գեղարքունիքի և Շիրակի մարզերում:

Ներկայացրեց, որ հնարավոր են որոշակի խնդիրներ արյան նմուշները Երևան տեղափոխելու հետ կապված: Սակայն այժմ Երևան են տեղափոխվում միայն դրական արձանագրված դեպքերը:

Ներկաները քննարկեցին խնդրի լուծման այլընտրանքները:

Հ.Զաքոյանը ներկայացրեց, որ հնարավոր տարբերակ է պարեկներին տրամադրել անհրաժեշտ միջոցներ նմուշների տեղափոխման համար, նաև հավելեց, որ այդ միջոցները կարող են տրամադրվել նաև անասնաբույժներին:

Ա.Ասատրյանը բարձրաձայնեց, որ չնայած տպավորություն կա. որ թերակատարումներ կան, սակայն այժմ ցուցանիշները բավականին մոտեցել են իրականին, իսկ հնարավոր շեղումները իսկապես պայմանավորված են լաբորատորիաների փակման հետ:

Գ.Պապոյանը հայտնեց, որ անհրաժեշտ է ձեռնարկել հնարավոր բոլոր միջոցները հիվանդության կանխարգելման և տարածման դեմ արդյունավետ պայքար մղելու նպատակով: Անդրադառնալով բոլոր կարծիքներին, շեշտեց, որ հարկավոր է հստակեցնել, թե խնդրի ինչ լուծումներ է տեսնում ՍԱՏՄ-ն և ինչ ռեսուրսներ են հարկավոր խնդիրը լուծելու համար /մարդկային, ֆինանսական և տեխնիկական/:

Տ.Պետրոսյանը առաջարկեց, որ ՍԱՏՄ-ն և Էկոնոմիկայի նախարարությունը համատեղ լուծումներ գտնեն, ինչպես նաև 11 կետերից բացի մի քանի մասնաճյուղ բացվի նաև տարածաշրջաններում, անասնաբույժներն ապահովվեն անհրաժեշտ քանակի վառելիքով, իսկ նախորդ տարբերակով աշխատելը և տարածաշրջանային կենտրոնները վերաբացելը դառնում է անիմաստ և ոչ արդյունավետ:

Ներկաները անդրադարձան նաև վարձատրության մեխանիզմին: Ավելի արդյունավետ և որակյալ աշխատանքի համար անհրաժեշտության դեպքում պետք է ավելացվի նաև համապատասխան միջոցներով զինվածությունը: Քանի որ անասնաբույժների վարձատրությունը բավականին ցածր է և քանի որ բարձր պատասխանատվությամբ աշխատանք է, ոլորտը՝ կարևոր, անհրաժեշտ է ուշադրության կենտրոնում պահել նրանց աշխատավարձի բարձրացման հարցը : Չկա նաև մոտիվացիա այդ մասնագիտության ընտրության համար, իսկ վարձատրության բարձրացման տարբերակներից մեկը կարելի է դիտարկել ատեստավորումը: Նշվեց նաև, որ քանի որ մենք պահանջներ ունենք տնտեսավարողների նկատմամբ, անհրաժեշտ է նաև բոլոր անհրաժեշտ միջոցներով

զինել կառույցը, անհրաժեշտ են հագեցված լաբորատորիաներ: Հարկավոր է նաև ՀՀ կառավարությանը և Ֆինանսների նախարարությանը ներկայացնել բյուջեի մասով նախագիծ՝ շղթայի արդյունավետ գործունեությունը ապահովելու նպատակով:

Ամփոփելով ներկաների խոսքերը՝ Գ.Պապոյանը նշեց, որ հարկավոր է Էկոնոմիկայի նախարարության, ՍԱՏՄ-ի, Տեսչական մարմինների աշխատանքների համակարգման գրասենյակի, «ՀԱԲԼԾԿ» ՊՈԱԿ-ի, տնտեսավարողների և բոլոր շահագրգիռ անձանց հետ համատեղ աշխատել, տալ անհրաժեշտ գործընթացն ապահովելու համար միջոցների ֆինանսական գնահատական և դիմել Ֆինանսների նախարարություն:

Տ.Սարգսյանը նշեց, որ հարկավոր է երկու շաբաթ:

Հ.Մկրտչյանը, անդրադառնալով առկա իրավիճակին, ներկայացրեց, որ փորձանոթները հիմնականում վերադարձվում են ուշ և արյան հետքերով, ինչը, կարող է լինել նաև հիվանդության տարածման պատճառ: Դա կարող է պայմանավորված լինել դեպքերի քանակով, ինչը հնարավորություն չի տալիս ապահովել սանիտարահիգիենիկ պայմանները, Ա.Գևորգյանը հակադարձեց, որ վերահսկողության ընթացքում նմանատիպ իրավիճակները կապված են եղել փորձանոթների քանակի հետ:

Քանի որ որոշակի դժվարություններ կան նաև փորձանոթների տեղափոխման հետ կապված, պետք է հստակեցվի՝ ում կողմից են տեղափոխվելու և ինչ միջոցներով /որպես տարբերակ նշվեց նաև ծառայությունների մատուցման պայմանագիր կնքել որևէ կազմակերպության հետ և ապահովել դրանց տեղափոխումը, նաև անասնաբույժներին տալ պարեկներին տրամադրվող սարքերից/:

Ամփոփելով օրակարգի 1-ին հարցը, Գ.Պապոյանը առաջարկեց Խորհրդի կազմում ընդգրկված անդամների կառույցները 2 օրյա ժամկետում ներկայացնեն թեկնածուներ աշխատանքային խմբում ընդգրկելու նպատակով: Ստեղծված աշխատանքային խումբը երկշաբաթյա ժամկետում կտա անհրաժեշտ ռեսուրսների վերաբերյալ տեղեկատվություն և ֆինանսական գնահատական:

Օրակարգի 2-րդ՝ 1-ին եռամսյակում չիրականացված պլանային ստուգումների վերաբերյալ հարցը ներկայացրեց Տ.Պետրոսյանը: Նա ներկայացրեց, որ հաշվի առնելով, որ տնտեսավարողները կարող են փաստացի չգործել և իրենց գործունեությունը ժամանակավորապես դադարեցնել մի շարք հանգամանքներից ելնելով (ֆինանսական, սեզոնային և այլն), խորհրդի հավանությանը ներկայացնել տարբեր պատճառներով (հիվանդության, գործունեության վայրի փոփոխության) տվյալ պահին չգործող՝ ցանկում առկա տնտեսավարողների մոտ այլ եռամսյակներում համապատասխան ստուգումներ իրականացնելու հարցը: Ինչը միաձայն հավանության արժանացավ:

Օրակարգի 3-րդ՝ ՍԱՏՄ 2025 թվականի գնումների պլանում փոփոխություններ կատարելու վերաբերյալ հարցը ներկայացրեց Տ.Պետրոսյանը, սակայն խորհուրդը որոշում կայացրեց ավելի մանրամասն վերանայելու նպատակով հետաձգել հարցի քննարկումը:

Օրակարգի 4-րդ՝ Տիգրան Պետրոսյանի թեկնածությունը ՍԱՏՄ ղեկավարի պաշտոնում առաջադրելու հարցը ներկայացրեց Գ.Պապոյանը:

Տ.Պետրոսյանը շնորհակալություն հայտնելով նախարար Գ. Պապոյանին իր նկատմամաբ ցուցաբերած բարձր վստահություն համար, համառոտ ներկայացրեց իր աշխատանքային գործունեության վերաբերյալ տեղեկատվությունը, ինչպես նաև ներակայացրեց իր տեսլականը և պատկերացումները ՍԱՏՄ ղեկավարման ժամանակ իր առջև դրված խնդիրների և զարգացումների վերաբերյալ:

Խորհրդի քվեարկությանը մասնակցած անդամները 8 (ութ) կողմ ձայներով հավանություն տվեցին օրակարգի 4-րդ հարցին:

Օրակարգի 5-րդ, 6-րդ և 7-րդ հարցերը՝ ՍԱՏՄ որակի ապահովման վարչության 2024 թվականի 2-րդ կիսամյակի հաշվետվությունը, ինչպես նաև ՍԱՏՄ 2024 թվականի 4-րդ և 2025 թվականի 1-ին եռամսյանի կատարողականների գնահատումը ներկայացրեց Մ.Գրիգորյանը:

Նշեց, որ Խորհրդի կողմից հաստատված որակի ապահովման վարչության տարեկան գործունեությանն ծրագրով հաստատված բոլոր միջոցվառումները ուսումնասիրվել են, խախտումներն արձանագրվել և մանրամասն ներկայացվել

հաշվետվության մեջ, դրանք առանձին գրություններով պարբերաբար ներկայացվել են ՍԱՏՄ ղեկավարին՝ ՍԱՏՄ գործունեության բարելավման և շարունակական կատարելագործման նպատակով, ինչի հետևանքով աշխատանքներ են տարվել դրանք վերացնելու ուղղությամբ:

Մ.Գրիգորյանը համեմատական տանելով 2024թվականի 4-րդ և 2025թվականի 1-ին եռամսյակների կատարողականների միջև հայտնեց նաև, որ 2024թվականի 4-րդ եռամսյակի ցուցանիշները ավելի բարձր են 2025թվականի 1-ին եռամսյակի ցուցանիշներից: Հաշվի առնելով, որ կատարողականի գնահատման արդյունքները համեմատվում են նախորդ տարվա նույն հաշվետու ժամանակահատվածում ունեցած արդյունքների հետ, ապա կարող ենք ասել, որ ՍԱՏՄ-ն թե 2024 թվականի 4-րդ և թե 2025 թվականի 1-ին եռամսյակներում ՍԱՏՄ-ն ավելի բարձր ցուցանիշներ է արձանագրել թե՛ նպատակների, թե՛ գործընթացների և թե՛ արդյունքների մասով:

Հայտնեց նաև, որ առկա են 2024 թվականին 471 չիրականացված ստուգումներ:

2025 թվականի 1-ին եռամսյակում նախատեսված 241 պլանային ստուգումներից, իրականացվել է 196 ստուգում: Նշեց նաև, որ 2025թվականի հունիսի 20-ի դրությամբ կան 1-ին եռամսյակում արձակված ստուգումների հրամաններ, որոնք մինչ օրս իրականացված չեն:

Խորհրդի կազմը միաձայն հաստատեց 2024 թվականի 4-րդ և 2025 թվականի 1-ին եռամսյակների գործունեության կատարողականի գնահատումները և հավանության արժանացրեց 2024 թվականի 2-րդ կիսամյակի հաշվետվությունը:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԷԿՈՆՈՄԻԿԱՅԻ ՆԱԽԱՐԱՐ,
ՍՆՆԴԱՄԹԵՐՔԻ ԱՆՎՏԱՆԳՈՒԹՅԱՆ
ՏԵՍՉԱԿԱՆ ՄԱՐՄՆԻ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ
ԽՈՐՀՐԴԻ ՆԱԽԱԳԱՀ **Գ. ՊԱՊՈՅԱՆ**

ՍՆՆԴԱՄԹԵՐՔԻ ԱՆՎՏԱՆԳՈՒԹՅԱՆ
ՏԵՍՉԱԿԱՆ ՄԱՐՄՆԻ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ
ԽՈՐՀՐԴԻ ՔԱՐՏՈՒՂԱՐ **Ա. ՍՏԵՓԱՆՅԱՆ**